ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2017թ. թիվ 46-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ Ա.ԱՂԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 15 և 17 կետերը, հաշվի առնելով Տաշիր համայնքի ղեկավարի 24.01.2017թ. թիվ Ե-40 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի Ա.Աղեկյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի կազմում վերահաստատել համայնքի կողմից առաջադրված Աղասի Հովհաննիսյանի թեկնածությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. փետրվարի 1
ք.Վանաձոր